



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 01

ք. Արտաշատ

< 09 > 01 2012թ.

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ 2012 Թ. ՀՈՒՆՎԱՐԻՑ 1996 Թ. ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ
ԿՑԱԳՐՈՒՄ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.24 կետերով և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ հոդվածներով
Որոշում եմ՝

1. Արարատի մարզում 1996 թ. ծնված պատանիների կցագրման և բժշկական ստուգման աշխատանքները տարածքային զինկոմիսարիատներում անցկացնել 2012 թ. հունվարի 16-ից մինչև դեկտեմբերի 30-ը:

2. Կցագրման և բժշկական ստուգման աշխատանքները կազմակերպված և ժամանակին անցկացնելու նպատակով առաջարկել համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների և հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններին՝ նախապատրաստել և կցագրման ենթակա պատանիների անհրաժեշտ փաստաթղթերը հանձնել համապատասխան տարածքային զինկոմիսարիատներ, ապահովել 1996 թ. ծնված պատանիների ներկայանալը կցագրման տեղամաս:

3. Արտաշատի, Արարատի և Մասիսի տարածաշրջանների զինկոմիսարներին՝

1/ 1996 թ. ծնված պատանիների կցագրման աշխատանքներն իրականացնել սահմանված կարգով: Կցագրման ցուցակներում ընդգրկել ավագ տարիքի այն քաղաքացիներին, որոնք ժամանակին չեն վերցրվել զինվորական հաշվառման

2/ մշակել կցագրման համար անհրաժեշտ միջոցառումների պլանները, կցագրման ընթացքի և ավարտի մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

4. Կցագրումը կազմակերպված անցկացնելու նպատակով առաջարկել « Ոստիկանության Արարատի մարզային վարչությանը »

1/կազմակերպել զինվորական հաշվառումից խուսափողների որոնում և ապահովել նրանց ներկայությունը կցագրման տեղամասեր

2/ապահովել հասարակական կարգի պահպանումը կցագրման տեղամասերում:

5. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝

1/ կցագրման ընթացքում պատանիների բժշկական ստուգումն իրականացնել մասնագետ բժիշկներից կազմված հանձնաժողովներով /ըստ տարածաշրջանների/

2/կցագրման տեղամասն ապահովել անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և դեղամիջոցներով

3/ կազմակերպել կցագրման և բժշկական ստուգման ենթակա պատանիների բժշկական զննումը, լաբորատոր-ախտորոշիչ և հիվանդանոցային հետազոտությունն ու բուժումը:

6. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը և դպրոցի տնօրեններին՝

1/զինկոմիսարիատների կողմից ներկայացված ժամկետում ապահովել պատանիների ներկայանալը կցագրման տեղամաս,

2/պատանիների կցագրման ընթացքում գործող օրենսդրության վերաբերյալ բացատրական աշխատանքներ տանելու նպատակով, կցագրման տեղամաս գործուղել մեթոդիստների:

7. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնին՝ ապահովել կցագրման և բժշկական ստուգման ենթակա պատանիների տրանսպորտային փոխադրումը կցագրման տեղամասեր:


8. Հաստատել ըստ տարածաշրջանների բժշկական հանձնաժողովների կազմերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

ՄԱՐԶՊԵՏ՝



Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված 1



ՀՀ Արարատի մարզպետի 2012 թ.

հունվարի 9 -ի №1 որոշման

ԿԱԶՄ

Արտաշատի տարածաշրջանային բժշկական հանձնաժողովի

1. Հ. Կարապետյան – Արտաշատի գինվորական կոմիսար,
հանձնաժողովի նախագահ
2. Գ. Չոբանյան – ավագ բժիշկ, թերապևտ
3. Ն. Մինասյան – հոգեբույժ
4. Մ. Ավետիսյան – քիթ,կոկորդ,ակ.-բան
5. Լ. Հախնազարյան – ակնաբույժ
6. Գ. Գրիգորյան – վիրաբույժ
7. Մ. Մնացականյան – նյարդաբան
8. Ռ. Սաֆարյան – մաշկավեներաբան
9. Ի. Հովհաննիսյան – ատամնաբույժ
10. Լ. Ավետիսյան – բուժքույր
11. Ի. Կարապետյան – հանձնաժողովի քարտուղար

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզպետի 2012 թ.
հունվարի 9-ի № 1 որոշման

ԿԱՁՄ


Արարատի տարածարջանային բժշկական հանձնաժողովի

1. Գ. Դավիդյան – Արարատի զինվորական կոմիսար,
հանձնաժողովի նախագահ
2. Վ. Ղույան – ավագ բժիշկ, վիրաբույժ
3. Ա. Գրիգորյան – թերապևտ
4. Գ. Միրզոյան- նյարդաբան
5. Գ. Ստեփանյան – քիթ, կոկորդ, ակ.-բան
6. Ա. Սարգսյան - ատամնաբույժ
7. Պ. Պետրոսյան – մաշկավեներաբան
8. Ռ. Սահակյան - ակնաբույժ
9. Գ. Միրզոյան – հոգեբույժ
10. Հ. Վարդանյան – բուժքույր
11. Գ. Մարգարյան – հանձնաժողովի քարտուղար

ԿԱՁՄ

Մասիսի տարածարջանային բժշկական հանձնաժողովի

1. Գ. Մանուկյան – Մասիսի գինվորական կոմիսար,
հանձնաժողովի նախագահ
2. Յու. Հարությունյան – ավագ բժիշկ, վիրաբույժ
3. Ն. Հարությունյան – թերապևտ
4. Ս. Հովսեփյան – նյարդաբան
5. Գ. Վարդանյան – հոգեբույժ
6. Ս. Նավասարդյան – քիթ, կոկորդ, ակ.-բան
7. Լ. Սարգսյան – ակնաբույժ
8. Բ. Մանթաշյան – ատամնաբույժ
9. Ս. Պողոսյան – մաշկավեներաբան
10. Ա. Հարությունյան – բուժքույր
11. Ի. Չալյան – հանձնաժողովի քարտուղար



Ո Ր Ո Շ Մ Ա Ն

N 02

ք. Արտաշատ

< 12 > 01 2012թ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի N6 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի գրությունը

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի հունիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> N 68 որոշման հավելվածի 6-րդ տողում <<Մուրադյան Նարինե>> բառերը փոխարինել <<Կարապետյան Անիտա>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ԲԱԴԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 03

“13” 01 2012թ.

“ԱՐԱՐԱՏԱՌՍՊԱՍ” ՓԲԸ-Ի ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿԾԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և ի կատարումն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 20-ի N 891-Ա որոշման 3 և 4 կետերի՝

հաստատել “Արարատառուսպաս” ՓԲԸ-ի միջանկյալ լուծարման հաշվապահական հաշվեկշիռը համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՉԼ N 1

Համարձակման հրապարակում

ՀԱՕՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՕՎԵԿՇՈՒՄ

առ 20.12.2011թ.
(ամսաթիվ, ամիս, տարի)

Կազմակերպության անվանումը	« Արարատաբեր » ՊԲԸ	ժամկետը	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Արարատաբեր		
Պետական ռեգիստրում գրանցման համարը			14.14000699
Հարկ վճարողի հաշվառման համարը			04200284
Չափի միավորը			հազ դրամ
Գտնվելու վայրը	Արարատաբեր օգտագործող 23/79		
Փաստացի գործունեության իրականացման վայրը			
			հեռախոսը

Անվանում	Համար	Կատարող տնտեսական միություն	Հարկային տարի (տարածաշրջան) ընդհանուր
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	294	294
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020		
Ոչ նյութական ակտիվներ	030		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070		
	071		
	072		
	073		
	074		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	294	294
II. Ընթացիկ ակտիվներ			
	090		
Նյութեր	100		
Աճեցվող և բուծվող կենդանիներ	110	30	30
Արագամաշ առարկաներ	120		
Անավարտ արտադրություն	130		
Արտադրանք	140		
Ապրանքներ	150		
Տրված ընթացիկ կանխավճարներ	160		
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	170		
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	180		
Այլ դեբիտորական պարտքեր	190		
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	200		
Դրամական միջոցներ, դրանց համարժեքներ	210		
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	211		
	212		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	30	30
ՀԱՇՎԵԿՈՒՄ	230	324	324

Պատկեր	տող	Ետխորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ծառանակաչափի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	2525	2525
Էմիսիոն եկամուտ	250		
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260		
Կուտակված շահույթ	270	(2201)	(2207)
Պահուստային կապիտալ	280		
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում	290		
	291		
	300	324	318
ԸՆդամեն սեփական կապիտալ			
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310		
Հետաձգված հարկային պարտավորություններ	320		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330		
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	350		
	351		
	360		
ԸՆդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370		
Կարճաժամկետ փոխառություններ	380		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390		
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420		
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր	440		
ժառանգակիցներին (հիմնադիրներին)	450		6
Այլ կրեդիտորական պարտքեր	460		
Եկամուտներին վերաբերող շնորհներ	470		
Ընթացիկ պահուստներ	480		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	481		
	482		
	483		
	490		6
ԸՆդամենը ընթացիկ պարտավորություններ			
	500	324	324
ՀԱՇՎԵԿՈՒՄ			



Քյոթ Ս. Մարտիկյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԾԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Զ. Մարտիկյան Զ. Մարտիկյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԾԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ա Ր Ա Ր Ա Տ Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Արտաշատ

№ 04

«17» «01» 2012թ.

«ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐՁՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /կող' 62-3.2-25/ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Քաղաքացիական ծառայության մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածով և «Արարատի մարզպետի 2003թ. փետրվարի 10-ի N 20 -Ն որոշման 2-րդ կետով հաստատված՝ Քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետի /կող' 62-3.2-25 / թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2012թ. հունվարի 18-ին կայանալիք մրցույթի մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Բարսեղյան - ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և
վերլուծության վարչության գլխավոր
մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Սուրեն Թունյան - ՔԾԽ աշխատակազմի իրավաբանական
վարչության գլխավոր մասնագետ,

անդամներ՝

Գեղամ Միրզոյան - մարզպետարանի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության սոցիալական
ապահովության բաժնի պետ,

Սուսաննա Խուդավերդյան - մարզպետարանի աշխատակազմի
անձնակազմի կառավարման բաժնի պետ,

Ռուզան Հայրապետյան - Արտաշատի քաղաքի թիվ 5 միջնակարգ
դպրոցի տնօրեն,

Էլմիրա Գրիգորյան - Արտաշատ քաղաքի թիվ 4 միջնակարգ
դպրոցի ուսուցչուհի :

ՄԱՐԶՊԵՏ՝



Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

17/01/2012 11:03:51 A

ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական
 զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ
 (ծածկագիր՝ 62-3.2-25)

Հանձնաժողովի կազմը

Գեղամ Սիրզոյան

Հաստատությունը՝ 62. Արարատի մարզպետարան
 Պաշտոնը՝ Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության
 սոցիալական ապահովության բաժնի պետ

Սուսաննա Խուդավերդյան

Հաստատությունը՝ 62. Արարատի մարզպետարան
 Պաշտոնը՝ Անձնակազմի կառավարման բաժնի պետ

Էլմիրա Գրիգորյան

Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
 Պաշտոնը՝ Արտաշատի թիվ 4 միջն. դպրոցի ուսուցչուհի

Ռուզաննա Հայրապետյան

Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
 Պաշտոնը՝ Արտաշատ քաղաքի թիվ 5 միջն. դպրոցի տնօրեն

Սուրեն Թունյան

Հաստատությունը՝ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
 Պաշտոնը՝ ՔԾԽ աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր
 մասնագետ

Կարեն Բարսեղյան

Հաստատությունը՝ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
 Պաշտոնը՝ ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության
 գլխավոր մասնագետ



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ա Ր Ա Ր Ա Տ Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 05

ք. Արտաշատ

«17» «01» 2012թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ և ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ
ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /կող' 62-3.2-35/
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Քաղաքացիական ծառայության մասին' Հայաստանի
Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածով և ՀՀ Արարատի մարզպետի
2010թ. դեկտեմբերի 16-ի N 132 -Ն որոշմամբ հաստատված՝
„Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու
համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի
աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական
գործադիր մարմինների հարցերով վարչության առաջատար մասնագետի
/կող' 62-3.2-35 / թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2012թ. հունվարի
18-ին կայանալիք մրցույթի մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

հանձնաժողովի նախագահ՝

Սուրեն Թունյան - ՔԾԽ աշխատակազմի իրավաբանական
վարչության գլխավոր մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Կարեն Բարսեղյան - ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և
վերլուծության վարչության գլխավոր
մասնագետ,

անդամներ՝

Գեղամ Միրզոյան - մարզպետարանի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության սոցիալական
ապահովության բաժնի պետ,

Ալբերտ Յակոբով - մարզպետի խորհրդական,

Ռուզան Հայրապետյան - Արտաշատի քաղաքի թիվ 5 միջնակարգ
դպրոցի տնօրեն,

Ռազմիկ Վարդանյան - Արտաշատի պետական քոլեջի տնօրեն :

ՄԱՐԶՊԵՏ՝



Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

17/01/2012 2:00:16 PM
ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և
հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության առաջատար մասնագետ
(ծածկագիր՝ 62-3.2-35)

Հանձնաժողովի կազմը

Գեղամ Միրզոյան
Հաստատությունը՝ 62. Արարատի մարզպետարան
Պաշտոնը՝ Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության
սոցիալական ապահովության բաժնի պետ

Ալբերտ Յակուբով
Հաստատությունը՝ 62. Արարատի մարզպետարան
Պաշտոնը՝ Մարզպետի խորհրդական

Ռազմիկ Վարդանյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
Պաշտոնը՝ Արտաշատի պետական քոլեջի տնօրեն

Ռուզան Հայրապետյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
Պաշտոնը՝ Արտաշատ քաղաքի թիվ 5 միջն. դպրոցի տնօրեն

Կարեն Բարսեղյան
Հաստատությունը՝ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
Պաշտոնը՝ ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության
գլխավոր մասնագետ

Սուրեն Թունյան
Հաստատությունը՝ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
Պաշտոնը՝ ՔԾԽ աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր
մասնագետ



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ա Ր Ա Ր Ա Տ Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 06

ք. Արտաշատ

«17» «01» 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /կող.՝ 62-3.3-7/
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Քաղաքացիական ծառայության մասին' Հայաստանի
Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածով և ՀՀ Արարատի մարզպետի
2010թ. դեկտեմբերի 16-ի N 132 -Ն որոշմամբ հաստատված՝
„Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու
համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի
աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի առաջատար
մասնագետի /կող.՝ 62-3.3-7 / թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2012թ.
հունվարի 18-ին կայանալիք մրցույթի մրցութային հանձնաժողովի հետևյալ
կազմը.

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Բարսեղյան - ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Սուրեն Թունյան - ՔԾԽ աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ,

անդամներ՝


Հայկազ Տերտերյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ,

Վարուժան Գրիգորյան - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Մարգարիտ Միրզոյան - Արտաշատ քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն,

Էլմիրա Գրիգորյան - Արտաշատ քաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի :

ՄԱՐԶՊԵՏ՝



Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

17/01/2012 4:03:06 PM
ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի
առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 62-3.3-7)

Հանձնաժողովի կազմը

Հայկազ Տերտերյան

Հաստատությունը՝ 62. Արարատի մարզպետարան
Պաշտոնը՝ Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության
գյուղատնտեսության բաժնի պետ

Վարուժան Գրիգորյան

Հաստատությունը՝ 62. Արարատի մարզպետարան
Պաշտոնը՝ Իրավաբանական բաժնի պետ

Էլմիրա Գրիգորյան

Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
Պաշտոնը՝ Արտաշատի թիվ 4 միջն. դպրոցի ուսուցչուհի

Մարգուշ Միրզոյան

Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
Պաշտոնը՝ Արտաշատ քաղաքի թիվ 3 դպրոցի տնօրեն

Սուրեն Թունյան

Հաստատությունը՝ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
Պաշտոնը՝ ՔԾԽ աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր
մասնագետ

Կարեն Բարսեղյան

Հաստատությունը՝ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
Պաշտոնը՝ ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության
գլխավոր մասնագետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 07

« 19 » 01 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2011-2014
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ա) ենթակետով, 1.6. կետով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2009 թվականի ապրիլի 20-ի թիվ 49 որոշմամբ ստեղծված մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011 թվականի աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 08-Ձ

ք. Արտաշատ

< 23 > 01 2012թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ), ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի
հունիսի 10-ի «Հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով
պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահության ոլորտի բաժնետիրական
ընկերությունների բժշկական անձնակազմի ընտրության (նշանակման) մրցութային
հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման օրինակելի կարգին և այդ
ընտրության (նշանակման) հիման վրա բուժաշխատողի հետ կնքվող աշխատանքային
պայմանագրի օրինակելի ձևին հավանություն տալու մասին» թիվ 22 նիստի
արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Արարատի մարզի առողջապահական հիմնարկների բժշկական
անձնակազմի ընտրության (նշանակման), մրցութային հանձնաժողովի ձևավորման,
մրցույթի անցկացման կարգը համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ղեկավար Ա. Վարդանյանին՝ սույն որոշումը սահմանված
կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարություն՝ պետական գրանցման:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կ Ա Ր Գ

«ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
(ՆՇԱՆԱԿՄԱՆ), ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԶԵՎԱԿՈՐՄԱՆ, ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Արարատի մարզի առողջապահական ոլորտի բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ բժշկական հաստատություն) բժշկական անձնակազմի ընտրության (նշանակման), մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման օրինակելի կարգը և պայմանները:
2. Սույն կարգը տարածվում է բժշկական հաստատության բժիշկ-մասնագետների և միջին բուժանձնակազմի (բուժքույր, մանկաբարձ, ֆելդշեր, ատամնատեխնիկ), (այսուհետ՝ Բուժաշխատող) ընտրության կարգի նկատմամբ:
3. Բուժաշխատողը ընտրվում է (նշանակվում) բաց կարգով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա:
4. Բաց մրցույթ հայտարարելու մասին որոշումն ընդունում է բժշկական հաստատության գործադիր մարմինը (տնօրենը)՝ Բուժաշխատողի թափուր պաշտոն առաջանալու դեպքում:
5. Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:
6. Մրցույթին չի կարող մասնակցել այն քաղաքացին, ով՝
 - 1) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է բժշկական գործունեություն իրականացնելու իրավունքից.
 - 2) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը.
 - 3) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
 - 4) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
7. Բուժաշխատողի ընտրության (նշանակման)՝
 - 1) պարտադիր պայմաններն են՝
 - ա. միջին բուժանձնակազմի համար միջին մասնագիտական, իսկ բժիշկ-մասնագետների համար՝ բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն,
 - բ. բժիշկ-մասնագետների համար՝ հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,

դ. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն,

2) լրացուցիչ պայմաններն են՝

ա. համակարգչով աշխատելու ունակություն.

բ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Բուժաշխատողի թափուր պաշտոնի հավակնորդների՝ սույն կարգով նախատեսված պարտադիր պայմանները հավասարապես բավարարելու դեպքում պաշտոնի նշանակելիս հաշվի են առնվում լրացուցիչ պայմաններից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի առկայությունը միաժամանակ:

8. Սույն կարգի 7-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետով սահմանված հետբուհական կրթության առկայության պահանջը (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա) չի տարածվում այն բժիշկ-մասնագետների նկատմամբ, ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ հետդիպլոմային կրթության պահանջ չի սահմանվել:

9. Բուժաշխատողի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է մրցույթ հայտարարած բժշկական հաստատության տնօրենի կողմից ստեղծած աշխատանքային խումբը (այսուհետ՝ Աշխատանքային խումբ):

10. Մրցույթն անց է կացվում հարցազրույցի միջոցով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

11. Բուժաշխատողների թափուր պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Աշխատանքային խումբը ոչ ուշ, քան մրցույթն անցկացնելուց 30 օր առաջ տեղադրում է տվյալ բժշկական հաստատության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական էլեկտրոնային կայքում, ինչպես նաև 5-օրյա պարբերականությամբ առնվազն 2 անգամ հրապարակում է առնվազն մեկ հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով (հանրապետական կամ տեղական ռադիո, հեռուստատեսություն, մամուլ):

12. Բուժաշխատողների թափուր պաշտոնի համար բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստում պարտադիր նշվում է՝

1) Բուժաշխատողի թափուր պաշտոնի մասնագիտության անվանումը, որը զբաղեցնելու համար անցկացվելու է մրցույթ,

2) մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման վայրը, ժամը և վերջնաժամկետը.

3) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը.

4) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը).

III. ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

13. Մրցույթին մասնակցելու համար Բուժաշխատողների մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող Աշխատանքային խմբին թափուր տեղի հավակնորդի կողմից ներկայացվում է՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3x4 չափի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, միջին մասնագիտական, իսկ բժիշկ-մասնագետի թափուր պաշտոնի մրցույթի դեպքում բարձրագույն և հետբուհական (ու՛մ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները,

6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,

8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

14. Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով և սույն կարգի 13-րդ կետով նախատեսված փաստաթղթերի բնօրինակներով և պատճեններով անձամբ ներկայանում է Աշխատանքային խմբին: Աշխատանքային խումբը քննության է առնում փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունը, սույն կետում նշված փաստաթղթերի պատճենները համեմատում է բնօրինակների հետ, ընդունում դրանք և տրամադրում է ստացական:

15. Աշխատանքային խումբը վարում է մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյան: Գրառումը կատարվում է փաստաթղթերի ընդունման օրը:

16. Մրցույթին մասնակցելու համար դիմած յուրաքանչյուր մասնակից (այսուհետ՝ Մասնակից) կարող է մրցույթից առնվազն մեկ օր առաջ գրավոր կարգով դիմելով Հանձնաժողովին՝ հրաժարվել մրցույթին մասնակցելուց:

17. Մրցույթն անցկացվում է հայտարարության մեջ նշված օրը, նշված տեղում և ժամկետում:

IV. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԸ

18. Բուժաշխատողի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնում է մրցույթ հայտարարած բժշկական հաստատության տնօրենի հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

19. Հանձնաժողովի կազմը հաստատվում է Բուժաշխատողի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութ հայտարարած բժշկական հաստատության տնօրենի հրամանով՝ մրցութը սկսելուց ոչ շուտ, քան 24 ժամ առաջ: Մրցութը սկսելուց առնվազն վեց ժամ առաջ, Աշխատանքային խումբը ընտրված թեկնածուներին տեղեկացնում է Հանձնաժողովի անդամ ընտրվելու, մրցույթն անցկացնելու օրվա, ժամի և վայրի մասին:

20. Հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից՝

- 1) բժշկական հաստատության տնօրեն-նախագահ,

2) բժշկական հաստատության տնօրենի բուժական գծով տեղակալ,
 3) մրցույթ հայտարարած բժշկական հաստատության մասնագիտության գծով մասնագետ, եթե բժշկական հաստատությունում չկա համապատասխան մասնագետ, ապա տվյալ մասնագիտության գծով մասնագետ հրավիրվում է այլ բժշկական հաստատությունից,

4) մրցույթ հայտարարած բժշկական հաստատության բաժնի կամ բաժանմունքի վարիչ),

5) տվյալ բժշկական հաստատության, որպես ընկերություն, բաժնետոմսերի կառավարման լիազորություններ ունեցող լիազոր մարմնի ներկայացուցիչ:

21. Հանձնաժողովի կազմից քվեարկությամբ ընտրվում է քարտուղար:

22. Մրցույթին կարող են մասնակցել նաև ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ, մամուլի և զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ, ովքեր Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

23. Եթե մրցույթի ընթացքում Հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը Հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա Հանձնաժողովի կազմը չի համալրվում:

24. Եթե մրցույթի ընթացքում Հանձնաժողովի նախագահի և (կամ) քարտուղարի մասնակցությունը Հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա Հանձնաժողովի մյուս անդամներից նշանակվում են համապատասխանաբար Հանձնաժողովի նախագահ և քարտուղար՝ բժշկական հաստատության տնօրենի կամ նրան փոխարինող անձի հրամանով:

V. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար Բուժաշխատողների թափուր պաշտոններ զբաղեցնելու հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից,

2) ապահովել մրցույթի անցկացման թափանցիկությունը և հրապարակայնությունը:

26. Հանձնաժողովը՝

1) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց.

2) կազմում է քվեաթերթիկներ, որի ձևը հաստատում է բուժհաստատության տնօրենը.

3) հարցազրույցից անմիջապես հետո անցկացնում է փակ գաղտնի քվեարկություն.

4) քվեարկության արդյունքում յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ կայացնում է որոշում.

5) ամփոփում է մրցույթի արդյունքները.

6) իրականացնում է քննարկումներ առանձին հարցերի շուրջ.

7) հրապարակում է մրցույթի արդյունքները.

8) հաղթող ճանաչված Մասնակցի (Մասնակիցների) վերաբերյալ տալիս է եզրակացություն:

9) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

27. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

28. Հանձնաժողովի անդամի կողմից մրցույթի անցկացման սույն կարգը խախտելու դեպքում Հանձնաժողովը տվյալ հարցի վերաբերյալ ընդունում է որոշում և մրցույթի ավարտից հետո ներկայացնում է տնօրենին՝ նշված անձի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

29. Հանձնաժողովի նախագահը՝

1) Աշխատանքային խմբից ստանում է մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած յուրաքանչյուր բուժաշխատողի թափուր պաշտոնի հավակնորդի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը, Հանձնաժողովի կնիքը.

2) վարում է Հանձնաժողովի նիստերը.

3) որոշում է մրցույթի հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ այն համաձայնեցնելով Հանձնաժողովի անդամների հետ.

4) կազմակերպում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

30. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է Հանձնաժողովի նիստերը.

2) ձևակերպում է Հանձնաժողովի եզրակացությունները.

3) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

IX. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

31. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը.

2) բարձրաձայն հայտարարում է իր կողմից տրված հարցի պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը մասին, իսկ սխալ պատասխանի դեպքում տալիս է ճիշտ պատասխանը.

- 3) մասնակցում է հարցազրույցի արդյունքում Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մասնակցի համար անցկացվող քվեարկություններին.
- 4) ստորագրում է մրցույթի եզրակացությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում «հատուկ կարծիքը կցվում է» բառերը.
- 5) ծանոթանում է նիստերի արձանագրություններին.
- 6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

Ճ. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

32. Մրցույթն անցկացվում է Մասնակիցների հետ հարցազրույցի միջոցով՝ Բուժաշխատողների լիազորությունների շրջանակներում՝ Մասնակցի գործնական կարողությունները և պաշտոնեական գործառույթների իմացությունը ստուգելու նպատակով:
33. Հանձնաժողովը յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին: Հարցազրույցը ձայնագրվում և արձանագրվում է:
34. Հարցազրույցն անցկացվում է հարցատոմսերով, որոնք բժիշկ-մասնագետների համար բաղկացած են 20 հարցից, իսկ միջին բուժաշխատողների համար՝ 15 հարցից: Սույն կարգի 35-րդ և 36-րդ կետերում նշված հարցերը կազմվում են ՀՀ առողջապահության նախարարության կողմից:
35. Բժիշկ-մասնագետների հարցատոմսը բաղկացած է՝
- 1) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք՝ 5 հարց,
 - 2) ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում 5-հարց
 - 3) պաշտոնեական գործառույթների շրջանակից – 10 հարց:
36. Միջին բուժաշխատողի հարցատոմսը բաղկացած է՝
- 1) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք՝ 3 հարց,
 - 2) ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում՝ 2-հարց
 - 3) պաշտոնեական գործառույթների շրջանակից – 10 հարց:
37. Հարցատոմսերի հարցերը և պատասխանները չեն հրապարակվում:
38. Հանձնաժողովի անդամների կողմից բանավոր կարգով կարող են տրվել հարցատոմսի հետ առնչվող ոչ ավելի քան 3 հարակից հարցեր տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված պաշտոնեական գործառույթների շրջանակից:
39. Հանձնաժողովը յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույցից առաջ, նրա ներկայությամբ, համակարգչում նախօրոք զետեղված հարցերից համակարգչի միջոցով պատահական ընտրությամբ ընտրում է հարցերը և կազմում հարցատոմս ու համարակալում այն: Հանձնաժողովին տրվում են համակարգչից դուրս բերված հարցատոմսի հարցերի ճիշտ պատասխանները:
40. Մասնակիցը ստանում է հարցատոմսը, ծանոթանում և իր կողմից նախընտրած հերթականությամբ պատասխանում հարցերին: Հարցազրույցի մասնակցին պատրաստվելու համար տրվում է տասնհինգ րոպե ժամանակ: Հարցատոմսի համարն արձանագրվում է:
41. Մասնակցի կողմից հարցազրույցի հարցատոմսի հարցերի վերաբերյալ տրված պատասխանները գնահատվում են ճիշտ կամ սխալ՝ Հանձնաժողովի մասնագետ անդամի կամ Հանձնաժողովի նախագահի կողմից: Եթե մասնակցի տված

պատասխանը գնահատվում է սխալ, ապա Հանձնաժողովի գնահատական տվող անդամի կողմից հնչեցվում է ճիշտ պատասխանը:

42. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը արձանագրվում է: Արձանագրության մեջ ամրագրվում է յուրաքանչյուր հարցը, հարցի վերաբերյալ մասնակցի տված պատասխանը, Հանձնաժողովի համապատասխան (նշելով նրա անունը և ազգանունը) անդամի գնահատականը (ճիշտ կամ սխալ), իսկ սխալ պատասխանի դեպքում՝ հնչեցրած ճիշտ պատասխանը: Արձանագրությունը ստորագրվում է այն կազմողի, մասնակցի և Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

43. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց հետո անցկացվում է փակ գաղտնի քվեարկություն՝ Հանձնաժողովի նախագահի կողմից կնքված և ստորագրված քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկի վրա նշվում է մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

44. Բոլոր Մասնակիցների հետ հարցազրույց անցկացնելուց հետո Մասնակիցները հրավիրվում են հարցազրույցի անցկացման սենյակ, որից հետո Հանձնաժողովի նախագահը բացում է քվեաթերթիկները և բարձրաձայն հայտարարում մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը և տրված ձայների «կողմ» կամ «դեմ» լինելը: Մեկից ավել նշում պարունակող կամ ոչ մի նշում չպարունակող քվեաթերթիկը համարվում է անվավեր: Հանձնաժողովի նախագահի հայտարարություններն արձանագրվում են Հանձնաժողովի քարտուղարի կողմից:

45. Մրցույթի հաղթող են ճանաչվում այն Մասնակիցները, ովքեր քվեարկության արդյունքում հավաքել են Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների հավասար կամ կեսից ավելի կողմ ձայներ:

46. Եթե Մասնակիցներից ոչ մեկը քվեարկության արդյունքում չի հավաքել Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների հավասար կամ կեսից ավելի կողմ ձայները, ապա Հանձնաժողովը ընդունում է որոշում մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին և անցկացվում է նոր մրցույթ:

Եթե մրցութային հանձնաժողովն իրավազոր չէ (նիստին չի մասնակցում հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին), ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է կրկնակի մրցույթ:

Կրկնակի մրցույթի ժամանակ մրցութին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով:

Եթե մրցութին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, ինչպես նաև, եթե մրցութին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է նոր մրցույթ:

Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

Նոր մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում:

Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով:

Եթե նոր կամ կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), ինչպես նաև նոր կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվում է նոր մրցույթ:

XI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

47. Հանձնաժողովի կողմից մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում, այն կարող է գրավոր բողոքարկվել մասնակցի (իր արդյունքների մասով) կամ Հանձնաժողովի անդամի կողմից:

48. Մրցույթի արդյունքները բողոքարկվում է վերադաս մամին, որի ենթակայության տակ է գտնվում տվյալ բժշկական հաստատությունը, որտեղ վերադաս մարմնի ղեկավարի հրամանով ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով, որը և քննում է մրցույթի մասնակցի և/կամ Հանձնաժողովի անդամի կողմից ներկայացված բողոքը: Բողոքարկման հանձնաժողովում կարող են ընդգրկվել նաև ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ: Բողոքի քննարկման արդյունքում բողոքարկման հանձնաժողովի նախագահն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) մրցույթի արդյունքը կոնկրետ մասնակցի վերաբերյալ անփոփոխ թողնելու մասին.

2) մրցույթի կոնկրետ մասնակցին հաղթող ճանաչելու մասին.

3) մրցույթի կոնկրետ մասնակցին հաղթող չճանաչելու մասին:

49. Մրցույթի անցկացումից և բողոքարկման արդյունքների հրապարակումից հետո մրցույթի արդյունքները հրապարակվում են նույն օրը՝ անմիջապես:

50. Մրցույթի արդյունքների հրապարակման մասին կազմվում է մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկ, որը կնքվում է Հանձնաժողովի նախագահի կողմից:

51. Մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկում նշվում են՝

1) Բուժաշխատողի թափուր պաշտոնի մասնագիտության անվանումը, որը գրադեցնելու համար անցկացվել է մրցույթը.

2) մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը, ինչպես նաև մրցույթի արդյունքների հրապարակման ամսաթիվը և ժամը.

3) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (Մասնակիցների) ազգանունը, անունը, հայրանունը:

4) սույն կարգի 48-րդ կետի 3-րդ ենթակետում նախատեսված դեպքերում հրապարակման մեջ նշվում է մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու մասին:

52. Բողոքի քննարկման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

XII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

53. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվածներից մեկին տվյալ բժշկական կազմակերպության տնօրենը, երեք աշխատանքային օրվա ընթացքում նշանակում է թափուր պաշտոնում՝ կնքելով նրա հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ սահմանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 3 ամիս փորձաշրջան:

54. Աշխատանքներն ավարտելուց անմիջապես հետո Հանձնաժողովի քարտուղարը բժշկական հաստատության տնօրենին հանձնում է՝

1) Հանձնաժողովի կնիքը,

2) Մասնակիցների հետ հարցազրույց անցկացնելու մասին արձանագրությունները.

3) քվեարկությունների արդյունքում Մասնակիցների հավաքած ձայների մասին արձանագրությունը.

4) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին որոշումը.

5) մրցույթի արդյունքում կոնկրետ մասնակցի հաղթող չճանաչելու մասին որոշումը.

6) մրցույթի արդյունքում ոչ մի մասնակցի հաղթող չճանաչելու մասին որոշումը.

7) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (Մասնակիցների) վերաբերյալ եզրակացությունը.

8) մրցույթը չկայացած համարելու մասին որոշումը.

9) քվեաթերթիկները.

10) մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկը.

11) այլ փաստաթղթեր:

XIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

55. Հանձնաժողովը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Մասնակիցների վերաբերյալ որոշումը, կնիքը, ինչպես նաև մրցութային փաթեթը Աշխատանքային խմբին է հանձնում, որից հետո դադարեցնում է իր գործունեությունը:

XIV. ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

56. Մրցույթը սկսելու օրը, ժամը և վայրը կարող է փոփոխվել՝ այդ մասին ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելու օրվանից մեկ շաբաթ առաջ հայտարարություն հրապարակելով՝ մամուլի և զանգվածային լրատվության այն նույն միջոցով, որտեղ հրապարակվել է մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ա Ր Ա Ր Ա Տ Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 09

ք. Արտաշատ

«27» «01» 2012թ.

ՅՈՂԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 62-3.1-18/ Յողիկ Գրիգորյանին շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան :

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ